

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕՐԱՆԱԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ 10 ՏԱՐՈՒՆ ԸՆԹԱՅՔԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԹՈՒՉՔ ԿԱՏԱՐԱԾ Ե ԴԵՊԻ ԹՈՒՐԵԻԱ

Իսրայելեան «Էլ Ալ» օդանավային ընկերութեան պատկանող օդանաւը 10 տարուան ընթացքին առաջին անգամ ըլլալով թռիչք կատարած է դէպի Թուրքիա: Բեռնատար օդանաւը 24 մայիսին էջք կատարած է Պոլսոյ մէջ: Այս մասին կը հաղորդէ ռուսական «Մը-Թըքըի» կայքը: Անգարայի մէջ Իսրայէլի դեսպանատունէն յայտնած են, որ օդանավային ընկերութիւնը սկսած է երկու երկիրներուն միջեւ թռիչքներ կատարել, ինչ որ Թուրքիոյ եւ Իսրայէլի միջեւ առետուորի մրցանշային նոր ցուցանիշներու արձանագրումը պիտի խթանէ: Իսրայէլի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները կտրուկ կերպով վատթարացած էին 2010 թուականին, երբ Կազա ուղղուող թրջական «Մաւի Մարմարա» նաւը իսրայէլեան բանակին կողմէ ենթարկուած էր յարձակումի, որուն պատճառով տասը մարդ մահացած էր, որմէ տոք ալ Թուրքիան տուն կանչած էր Իսրայէլի մէջ իր դեսպանը: Իսրայէլ 2016 թուականին զոհերու հարազատներուն իբրեւ հատուցում վճարած էր 20 միլիոն տոլար:

ԱԿՆԱՐԿ

«ԵՐԱՁ ՄԸ ՈՒՆԻՍ»-ԷՆ ՄԻՆՉԵՒ «ՉԵՄ ԿՐՆԱՐ ՇՆՉԵԼ» ԿԱՄ ԱՋԻ ԵՒ ՉԱԽԻ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՉԸ

Մինիափոխի դէպքը արագօրէն դուրս եկաւ Միացեալ Նահանգներու սահմաններէն եւ յայտնուեցաւ աշխարհի ուշադրութեան կիզակետին: Կը թուէր, որ Մարթին Լութըր Քինկով սկսած ցեղերու իրաւահաւասարութեան շարժումը շատ ճամբայ կտրած է եւ խորականութիւնը սահմանադրութեամբ, օրէնքով եւ քաղաքական թէ հասարակական-ընկերային մարզերու մէջ հիմնովին չէզոքացուցած: Սպիտակ-սեւի բաժանարար գիծերը ո՛չ միայն Միացեալ Նահանգներու, այլ նաեւ աշխարհագրական տարբեր միջավայրերու մէջ վաղուց ընշուած կը լուծին ըլլալ:

Աշխարհաքաղաքական ժամանակակից գործընթացներու հետեւանքներէն կարելի է նկատել աշխարհումեան կուսակցութիւններու թեցումը դէպի ծայրայեղ աջի, ազգայնականի, չքսելու համար ցեղապաշտականի: Տարբեր դրսեւորումներ, տարբեր քաղաքական միջավայրերու մէջ կրնան ունենալ նաեւ իրենց ընտրական ազդեցութիւնները: Հասարակական մակարդակի վրայ երեւոյժ ծայրայեղականութիւնները վերափոխուեցան ընտրական կարգախօսւներու եւ յաճախ երրուպական քաղաքներու մէջ նման ցեղապաշտական առաջադրանքներ պաշտօնական բնոյթ ստացան եւ արդիւնաւորուեցան քուէահաւաքի առումով:

Միացեալ Նահանգներու նախագահը իր հռետորաբանութեամբ, անհանդուրժողական ռճով, գերաւայութեան տեսութիւններու յաճախակի օգտագործումով զարկ տուաւ խտրականութեան մօտեցումներուն: Հրահրումները ձեւաւորեցին որոշ ենթահող եւ հրաբուխ նախապատրաստող լաւաները ընդատակետայն ցնցումներ սկսան յառաջացնել:

Հակախտրական երազները, որոնք դարձած էին հասարակական առաջադրանք եւ գործնական տեսք ստացած օրէնքի եւ մտայնութեան ու մշակոյթի ուղղութիւններով կանգ առին կարծեք: Ո՛չ միայն կանգ առին, այլեւ հսկայական քայլերով մեծ ետդարձներ կատարեցին:

Ճորճ Ֆլոյտի սպանութիւնը պարզապէս ժայթքեցուց հրաբուխը: Ինդիոյ շատ արագ տեղափոխուեցաւ սեւի ու սպիտակի անաղական մօտեցումին: Ամերիկեան լրատուադաշտը նպաստեց հրաբուխի բորբոքումներուն: «Սեւամորթ մարդիկ կը մեռնին Ամերիկայի մէջ» վերտառութիւնը օրերէ ի վեր չ'իջներ ամերիկեան լրատումիջոցներու պաստառներէն թէ լրատուական նիւթերու առաջին հորիզոնականներէն:

Քաղաքականօրէն ակնկալելի էր, որ նման միջադէպ մը ընտրութիւններու նախօրեակին լիարժէք օգտագործուէր գործող նախագահի մրցակից ուժին կողմէ: Ընտրական մրցավազքերու մէջ օրինաչափ երեւոյթ են նման քաղաքականացումները: Ինդիոյ ցեղային հէնքի վրայ կատարուած արագ բեռնաջնջումն է, որ կը համոզէ դիպաշարին հետեւողը, թէ ո՛չ սահմանադրութիւնը, ո՛չ օրէնսդրական դաշտը, ո՛չ ալ ափրիկեան ծագումով Ամերիկայի քաղաքացիներուն զանգուածային ընդգրկումը ամերիկեան հասարակութեան թէ պետական համակարգին ի սպառ չէզոքացուցած է սեւ ու սպիտակի անաղական հակամարտութիւնը:

Հիմա հարցը Միացեալ Նահանգներու սահմաններէն ալ դուրս եկած է եւ ներգրուած եւրոպական կարգ մը երկիրներ: Սեւերու պաշտպանութեան շարժումը կը ծաւալի ո՛չ միայն ամերիկեան Նահանգներուն, այլ նաեւ Ամերիկայէն դուրս եւրոպական մայրաքաղաքներու մէջ:

Համաշխարհային գիւղը (կրպղը վիւլէճը) կը թուէր, որ իբրեւ բնակիչ ունի համաշխարհաքաղաքացիներ, որոնք բաց համակարգի մէջ կապ, յարաբերութիւն, գործընկերութիւն, ամուսնութիւն կը հաստատեն թէկուզ վիրթուալ տարածքներու վրայ: Այս մեծ ետդարձը ընդգծեց, որ Մարթին Լութըր Քինկի երազը տակաւին չէ իրականացած:

Սեւերու պաշտպանութեան շարժումը կ'ենթարկըւի անշուշտ քաղաքական վերափոխումներու: Դասակարգային շերտաւորումներ ստանալով տեղ-տեղ կը վերածուի աշխատուոր եւ դրամատեր դասակարգի միջեւ պայքարի, այլ տեղ ընդհանուր հաշուով հանրապետական-դեմոկրատական ամերիկեան դասական պայքարին: Իսկ համաշխարհային տարողութիւն ստանալու պարագային՝ աջի եւ ձախի դասական հակադրութեան:

Կանուխ է հաւանաբար բանավիճային խօսոյթի վերածելը՝ նոր աշխարհակարգը կրնա՝ վերափոխուած կամ դիմափոխուած ձեւով վերադարձնել դասական գաղափարաբանութեան իմասն վրայ աջի եւ ձախի ուղղութիւնները: Երազը չէ կատարուած. այդ պատճառով ալ անշնչելի դարձած է ապագադափարականացումած աշխարհը:

«Ա.»

ՊԱՆՊՏԱՅԻ ՄԷՁ

«ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՁ ԱՅՍ ՇԱՏ ԶԳԱՅՈՒՆ ՓՈՒԼԻՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՊԷՏՔ Ե ՊԱՀՊԱՆԵԼ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

ՇԵՇՏԵՅ 3. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն երէկ առաւօտեան ժամը 10:00-ին ընդունեց ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունին, որուն հետ ընկարկեց լիբանանեան քաղաքական բեւոյժը յուզող իրադարձութիւնները, երկրին մէջ տիրող ընդհանուր կացութիւնը, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւններն ու Լիբանանի



Շար.ը՝ էջ 3

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 21
ՇՏԱՊԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՅԱՐԴ ՆՈՒԻՐՈՒԾ Ե
251.950.000 Լ. Ո. ԵՒ 65.615 ԱՄ. ՏՈԼԱՐ
ՈՐԵԱՆ ՏԱՔ, ԱԻԵԼԻՈՎ ՕԳՆԵԼՈՒ ԿԱՐՈՂ ԿԸ ԴԱՌԱՆԵ



«Զորոնա»-ի ճգնաժամային Շտապը կը շարունակէ իր աշխատանքներուն զօրակցութեան համար ստանալ Նուիրատուութիւններ: 7 մայիսէն այսօր կատարուած է 52.150.000 լ.ո. եւ 6500 ամ. տոլարի օժանդակութիւն՝ Նուիրատութեանց ընդհանուր գումարը բարձրացնելով 251.950.000 լ. ոսկիի եւ 65.615 ամ. տոլարի:

Երկրի տնտեսական կացութեան արագընթաց գահավիժումին հետ, քաջալերական է նաեւ արտասահմանեան գաղութներու կատարած աշխատանքը՝ հասնելու համար լիբանանահայութեան կարիքներուն:

ՈՐԵԱՆ ՏԱՔ, ԱԻԵԼԻՈՎ ՕԳՆԵԼՈՒ ԿԱՐՈՂ ԿԸ ԴԱՌԱՆԵ

1) Լիբանանեան ոսկիով	
Յարութիւն եւ Սիւվիա Սթամպուլեան	25.000.000 լ.ո.
Շանթ Շէկեան	1.000.000 լ.ո.
Արա Պարտաքճեան	250.000 լ.ո.
Սասնոյ հայրենակցական միութիւն	500.000 լ.ո.
Ազգային մը	5.000.000 լ.ո.
«Բարիք» խումբ	700.000 լ.ո.
Մասիս Ալեքսանտրեան	300.000 լ.ո.
ԱՅՀԻԼ	5.000.000 լ.ո.
Յակոբ Սիմոնեան	500.000 լ.ո.
Դոկտ. Մկրտիչ Պուլտուզեան	1.000.000 լ.ո.
Յակոբ եւ Նարինէ Ստամպուլեան	10.000.000 լ.ո.
Տոքթ. Ճորճ Դիւլէյքեան	500.000 լ.ո.
Սալիք Բէշիշեան-Բակլայեան	300.000 լ.ո.
Տոքթ. Սիւլվի Եսքիճեան	2.000.000 լ.ո.
Ազգային մը	100.000 լ.ո.
2) Ամերիկեան տոլարով	
Արմէն Ասֆահանի	6000 ամ. տոլար
Սարգիսեան Եղբարք	500 ամ. տոլար

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 22
«ԶՈՐՈՆԱ»-Ի ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՏԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

«Զորոնա»-ի ճգնաժամային Շտապը առկայ համաճարակի ստեղծած տագնապին ի տես, իր ընթացիկ աշխատանքները կը շարունակէ:

Առ այդ, կը յայտնենք հետեւեալները.

- 1) «Փի.Սի.Ար.»-ի ընկութիւններ
Պուրճ Համուտի, Այնճարի եւ Անթիլիասի մէջ շարունակուեցան «Զորոնա»-ի «Փի.Սի.Ար.»-ի ընկութիւնները՝ որոնք թիւը հասաւ 1210-ի: Այս ընկութիւնները կը կատարին առողջապահութեան նախարարութեան, Լիբանանեան կարմիր խաչին, «Հարիրի» հիւանդանոցին եւ ԼՕԽ-ի հետ գործակցաբար:
 - 2) Դեղորայքի օժանդակութիւն
«Շաղգոյնեց» կեդրոնին մէջ հաստատուած դեղորայքի օժանդակութեան բաժանմունքը շարունակեց իր աշխատանքները՝ ցարդ օգտակար հանդիսանալով 781 պարագայի: Աշխատանքը նոր դասաւորումով պիտի շարունակուի Երեսփոխանական գրասենեակին միջոցով:
 - 3) Սննդամթերքի բաշխում
Նկատի ունենալով ժողովուրդի կարիքներուն բարձրացումը, Շտապը անցնող 2 շաբաթներուն պատրաստեց եւ բաշխեց սննդամթերքի յաւելեալ 1200 ծրար՝ շրջաններու ակումբներուն եւ Երեսփոխանական գրասենեակին միջոցով:
Նոյն ատեն, Ազգային առաջնորդարանը, գործակցութեամբ Շտապին, թաղականութեանց միջոցով բաժնեց սննդամթերքի 2000 ծրար:
 - 4) Պետական օժանդակութիւններ
Երեսփոխանական գրասենեակին եւ Շտապի ջանքերով, կարելիութիւն ստեղծուեցաւ Պէրյուրի քաղաքապետութենէն 800 անհատներու ապահովել 200.000 լ.ո. արժողութեամբ կտրօններ: Նոյն ձեւով, կարելի եղաւ ապահովել բանակի միջոցով բաժնուած 400.000 լ.ո. գումար 370 պարագաներու: Այս աշխատանքը կը շարունակուի:
Կարելոյ է նշել միաժամանակ, որ թէ՛ Պուրճ Համուտի եւ թէ՛ այլ շրջաններու քաղաքապետութիւններ, մեր միջամտութեամբ սննդամթերքի ծրարներ կամ կտրօններ բաշխեցին շրջանի հայորդիներու:
 - 5) Դիմակներու ցրում
Անցնող շաբթուան ընթացքին շուկաներու աստիճանական բացումով, ԼԵՄ-ական ընկերներ Պուրճ Համուտի մէջ կատարեցին 4500 դիմակի բաշխում: Տագնապի սկիզբէն այսօր բաժնուած է 48.000 դիմակ:
- Շտապը կը շարունակէ իր աշխատանքները:
- «Զորոնա»-ի այժմեական տագնապի աստիճանական լուծումը սակայն չի թէթեւցնէր լիբանանցիին ցարդ: Տնտեսական-եղեմական տագնապը կը շարունակէ մնալ, որուն համար ներկայիս ընկարկուի մէջ են այլ ծրագիրներ:

«ԶՈՐՈՆԱ»-Ի ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՏԱՊ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԳԱՄՆԵՐԸ ՎԱՐԱԿՈՒՄԸ ԵՆ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՂՐՈՎ



Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ անոր ընտանիքի անդամները վարակուած են «Զորոնա» ժահրով. անոնց ընկութեան արդիւնքը դրական եղած է: Այս մասին վարչապետը յայտնեց դիմատետրի իր էջի ուղիղ սփռումով:

Շար.ը՝ էջ 3

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ ՀԵՌԱՋԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԳԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱՆ

Երէկ առաւօտ՝ երկուշաբթի, 1 յունիս 2020-ին, Արամ Ա. վեհափառ հայրապետը եւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռձայնային հաղորդակցութիւն մը ունեցան: Վեհափառ հայրապետը շուտափոյթ ապաքինում մաղթեց վարչապետին ու իր ընտանիքին եւ մօտէն հետաքրքրուեցաւ ընդհանրապէս Հայաստանի ներկայ կացութեամբ եւ յատկապէս համաճարակին յառաջացուած դժուարութիւններով:

Շար.ը՝ էջ 3

ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՄՈՒԷԼ ԲԱԲԱՅԵԱՆԸ



Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութեան 1 յունիսին ընդունեց Արցախի Անվտանգութեան խորհուրդի նոր նշանակուած քարտուղար Սամուէլ Բաբայանը:

Շար.ը՝ էջ 3

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԶՈՐՈՆԱ»-ՈՎ ՎԱՐԱԿՈՒՄԸՆԵՐԸ 440-ԻՆ ՎԻՃԱԿԸ ԾԱՆՐ Ե, ԻՍԿ 55-ԻՆԸ՝ ՇԱՏ ԾԱՆՐ



Հայաստանի առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեան առցանց զրոյցի մը ընթացքին յայտնեց, որ Հայաստանի մէջ «Զորոնա» ժահրով վարակուածներէն, որոնց թիւը 5896 է, 440-ին վիճակը ծանր է, իսկ 55-ինը՝ շատ ծանր:

«Ընկութիւնները քիչ քանակով կատարուած են կիրակի օրը, որովհետեւ տարրալուծարանները ամբողջական ծանրաբեռնուածութեամբ չէին աշխատել: Ունիւք ծանր վիճակի մէջ գտնուող 440 քաղաքացի եւ ծայրայեղ ծանր վիճակի՝ 55 քաղաքացի, որոնցմէ 16-ն միացած է թոքերու արիեստական օդափոխութեան սարքին», դիտել տուաւ Թորոսեան:

Ան տեղեկացուց, որ 1 յունիսի դրութեամբ հաստատուած դէպքերուն ընդհանուր թիւը 9492 է, անոնցմէ 3402-ը՝ ապաքինած: Ընդհանուր առմամբ կատարուած է 58.668 ընկութիւն, իսկ մահերուն թիւը բարձրացած է 139-ի:

ԼԻՔԱՆՆԵԱՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՋՐՈՎ
ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ՀԱՍԱԻ
1233-Ի, ՄԱՀՈՒՄՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆ
ԹԻՒԸ ՀԱՍԱԻ 27-Ի, ԻՍԿ
ԱՊԱՔԻՆԱԾՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ՝ 712-Ի

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ 25
ՅՈՒՆԻՍԸ ԿԸ ՃՇԴԷ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐԵՇՐՋԱՆԸ ԱՄԱՐՏԵԼՈՒ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՈՒՆԱԿԱՆ



«Քորոնա» համաճարակի ճգնաժամին դեմ պայքարելու ծիրին մեջ գործադրուող ընդհանուր զորաշարժը տակալին ընթացքի մեջ է: Երեկ արդեն իսկ կրակմարի դրությունը սկսաւ կէս գիշերէն՝ մինչեւ առաւօտեան ժամը 5:00, շարունակելով ներառել ինքնաշարժի գոյգ թէ անգոյգ թիւերով երթելու իրաւունքը, ինչպէս նաեւ հետիոտն ու ինքնաշարժով փոխադրուողներուն դիմակի պարտադրութիւնը:

Կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարարութեան ընդհանուր տնօրէն Ֆատի Եարաք յայտնեց, որ 25 յունիսը 2019-2020 ուսումնական տարեշրջանը աւարտելու պաշտօնական թուականն է:

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երէկ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 1233-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 13 նոր վարակուածներ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ժահրով 27 վարակուած պարագաներ մահացած են, իսկ 712 ուրիշներ՝ ապաքինած:

Նախարարութեան համաձայն, նախորդ 24 ժամուան ընթացքին տեղացիներուն շարքին արձանագրուած են 7 վարակուածներ, իսկ արտերկրի լիբանանցիներուն շարքին՝ 6 վարակուածներ:

Առողջապահութեան նախարար Յամատ Յասան երէկ յայտնեց, որ ընդհանուր զորաշարժը մեղմացնելու իմաստով կառավարութեան կողմէ նոր դասաւորումներ որդեգրուեցան՝ նկատի ունենալով ներքին լիբանանեան իմաստով արձանագրուած լաւ տուեալները: «Հակառակ անոր որ «Քորոնա» ժահրով վարակուածներու բարձր թիւ մը ունինք, սակայն այդ վարակուածները Պէյրութ հասած արտերկրի լիբանանցիներուն մէջ են մեծաւ մասամբ եւ ոչ թէ տեղացիներուն, ինչ որ դրական տուեալ կը նկատուի», ըսաւ Յասան:

Ան շեշտեց, որ լիբանանեան ընկերութեան գիտակից ըլլալն ու անոր պատասխանատու վարուելակերպը միշտ են կառավարութիւնը, որ մեղմացնել ընդհանուր զորաշարժի քայլերը: «Բայց եւ այնպէս Լիբանան հասած արտերկրի լիբանանցիները պէտք է շարունակեն իրենց մեկուսացումը, իսկ լիբանանցիները յանձնառու մնան իրենց նախագգուշութիւններուն՝ պահպանելու համար վարակուածներու թիւը ցած պահելու նուաճումը», հաստատուեց Յասան:

Յասան ընդգծեց դիմակ կրելու կարեւորութիւնը՝ զայն նկատելով «Քորոնա» ժահրին դեմ պայքարի հիմնական գործիքը: «Անշուշտ մնացեալ քայլերը, ինչպէս՝ համախմբումներ հեռու մնալը, մայրուն կերպով ձեռքերը մաքուր պահելը, հակաանխմբում ու ընկերային հեռաւորութիւնները յարգելը իրենց կարգին կարեւոր են: Եթէ պատահի, որ տեղացիներուն մօտ վարակուածներուն թիւը դարձեալ աճ արձանագրէ, ապա տրուած դիրքութիւնները եւ երկիրը վերաբանալու քայլերը վերատեսուեցան պիտի ենթարկուին: Կ'ակնկալենք լիբանանցիներէն, որ անոնք մեզի օժանդակեն նաեւ համեմատաբար աւելի հանգիստ օրերուն ընթացքին, ինչպէս որ կատարած են դժուար պայմաններուն ընթացքին», ըսաւ ան:

Յասան յայտնեց, որ Մաժտալ Այնճարի մէջ «Քորոնա»-ի համաճարակին տարածումը կարելի եղած է հակակշիռի տակ առնել օգտագործուած խիստ միջոցառումներուն, ինչպէս նաեւ գիւղաքաղաքի բնակիչներուն ցուցաբերած գործակցութեան շնորհիւ:

«Այս եւս կը նկատուի նուաճում մը՝ լիբանանեան քաղաքացիական մակարդակի վրայ», աւելցուց Յասան:

Յասան յայտնեց, որ 8 յունիսէն սկսեալ մանկամուկները կրնան իրենց դռները վերաբանալ եւ իրենց կարողութեան 25 աճ հարիւր համեմատութեամբ գործել:

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՊ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ ԶՆՆԱՐԿԵՑ ԵՐԿՐԻՆ
ԱՊԱՅՈՎԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Վարչապետ Յասան Տիապ երէկ վարչապետարանին մէջ ընդունեց ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Սոհամետ Ֆահմին՝ ընկերակցութեամբ ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-գորավար Իմատ Օսմանի, ինչպէս նաեւ գինուորականներու պատկրակութեան մը:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցաւ երկրին ապահովական իրավիճակը: Վարչապետ Տիապի այցելեց նաեւ հորիզոնական հանդիպում երեսփոխանական պլոքը: Քննարկուեցան երկրին քաղաքական իրադարձութիւններն ու խորհրդարանին գումարած վերջին նիստին վերաբերող մանրամասնութիւններ:

Խորհրդակցական հանդիպում պլոքը վարչապետ Տիապին զօրակցութիւն յայտնեց:

Նշենք, որ նախկին վարչապետ Ռաշիտ Զարամէի նահատակութեան 33-ամեակին առիթով, վարչապետ Տիապ յայտնեց, որ այդ դէպքը քաղաքական սպանութիւն ըլլալէ աւելի Լիբանանի միասնականութիւնը սպաննելու փորձ մըն էր՝ նկատի ունենալով, որ Ռաշիտ Զարամէ կը մարմաւորէր լիբանանեան ազգային միասնականութիւնը:

«Ռաշիտ Զարամէ կը մնայ Լիբանանի



հասուն միտքը, պետական այդ եւ արժանապատուութեան խորհրդանիշը: Աստուած հոգին լուսաւորէ նահատակ վարչապետին, որ Զարամէ ընտանիքին մէջ ազգային այդ սկզբունքները ամրագրած է», նշեց վարչապետ Տիապ:

Յետմիջօրէին վարչապետարանը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ հերքուեցան այն տեղեկութիւնները, թէ Լիբանանի կառավարութիւնը որդեգրած է «Սիզըր» ամերիկեան պատժամիջոցներու օրէնքը: «Իրականութիւնը այն է, որ կառավարութիւնը պիտի սերտէ «Սիզըր» ամերիկեան պատժամիջոցներու օրէնքը եւ Լիբանանի վրայ անոր ունենալիք հետեւանքները, ինչպէս նաեւ այն քայլերը, որոնց կրնայ դիմել՝ մեղմացնելու համար երկրին վրայ այդ օրէնքին ունենալիք ժխտական ազդեցութիւնը: Կառավարութիւնը ոչ մէկ կերպով յանձնառութիւն յայտնեց, կամ ընտանեաց, կամ որդեգրեց այս օրէնքը», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

ՄԻՖԹԻ ՄԱԼԵՐ ՇԱՐ ԿԸ ՄԵՐԺԷ ԴԱՐՁԵԱԼ
ՍՏԱՆՁՆԵԼ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԼԻՔԱՆՆԻ
ԵՒ ԹՐԻՓՈԼԻԻ ՄԻՖԹԻԻ ՊԱՇՏՈՆԸ

Հիւսիսային Լիբանանի եւ Թրիփոլիի միւֆթի Մալքե Շաար անցեալ շաբաթավերջին այցելեց Տար Ֆաթուա, ուր հանդիպում վը ունեցաւ հանրապետութեան միւֆթի շէյխ Ապտել Լաթիֆ Տըրիանի հետ:

Հանդիպումին ընթացքին Շաար մերժեց վերստանձնել Հիւսիսային Լիբանանի եւ Թրիփոլիի միւֆթիի պաշտօնը, հակառակ անոր որ հանրապետութեան միւֆթիին փափաքն էր զայն պահել Նոյն պաշտօնին վրայ:

Շաար մարդեց, որ Թրիփոլիի Ֆաթուայի քարոզողը շէյխ Սոհամետ Իմամ ժամանակաւոր կերպով ստանձնէ իր պաշտօնը՝ մինչեւ մօտիկ ապագային ընտրութիւններու կազմակերպումը:



Միւֆթի շէյխ Սոհամետ Իմամ երէկ այցելեց հանրապետութեան միւֆթիին: Նշենք, որ Մալքե Շաար Թրիփոլիի իր բնակարանին մէջ ընդունած էր շէյխ Սոհամետ Իմամը, որուն յաջողութիւն մարդած էր՝ անոր ստանձնած նոր պաշտօնին առիթով:

ԼԻՔԱՆՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ԼԻՔԱՆՆԵԱՆ բանակի հրամանատարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, որ Պապալեքի մէջ բանակը երէկ առաւօտեան կանուխ ժամերուն կատարած է ներխուժում մը եւ ձերբակալած է Ս. Ս. անուան սկզբնատառերը կրող քաղաքացիին, որ ընտանեկան հարցի մը պատճառով մեղակցեց երկրակոյտներուն եւ գինեալ բախումներուն, որոնք հասած էին «Էր. ՓԷ. ԺԷ.» տիպի նռնակասետերու գործածութեան աստիճանին: Հաղորդագրութեան մէջ նշուեցաւ, որ բանակը խուզարկումները կը շարունակէ՝ ձերբակալելու համար նաեւ այլ յանցագործներ:

●ՆԵՐՔԻՆ գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Սոհամետ Ֆահմին ընդունեց ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-գորավար Իմատ Օսմանը, որուն հետ քննարկեց երկրին ապահովական իրադարձութիւններն ու ապահովութեան ուժերուն կողմէ որդեգրուած միջոցառումները, որոնք կը միտին գործադրել ներքին գործոց նախարարութեան իրաւիւնքները:

●ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ նախարար Մարի Զլոտ Նաժմը յայտնեց, որ ինք ստորագրած է դատական իշխանութեան մարզին մէջ կատարուելիք նշանակումները, հակառակ անոր որ այդ մասին ինք կատարած է դիտողութիւններ, որոնք կառուցած կը մնայ: «Այս փուլին, դատական իշխանութեան մարզին մէջ կատարուելիք նշանակումներն աւելի կարեւոր է դատական իշխանութեան անկախութիւնը», հաստատեց Նաժմը:

●ԵԼԵԻՄՈՒՏԵՐ նախարար Ղազի Ուազնի երէկ ընդունեց Զօր հանրապետութեան

ՊԸՐԻԻ ԿՈՉ ՈՒՂՂԵՑ ԿԱՉՄԵԼՈՒ
ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ ՍԸ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԼՈՒ
ԽԱՐԱԽՈՒԱԾ ՆԱԽԹ ԹՐԹԱԾՐԱՐԸ



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ Այն Թիւնէի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Զրիս Ռամփլիսը, որուն հետ քննարկեց քաղաքական վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ լիբանանեան-բրիտանական երկկողմանի յարաբերութիւնները:

Պըրրիի այցելեց նաեւ Դրամատուներու միութեան նախագահ Սելիմ Սֆէյր:

Քննարկուեցան երկրին ելեւմտական մարզին վերաբերող հարցեր:

Պըրրի ընդունեց նախկին նախարար Սալէի Ղարիպը, որ հանդիպումէն ետք յայտնեց, թէ քննարկած են Լիբանանը յուզող հարցերը, ինչպէս նաեւ ելեւմտական մարզին վերաբերող որոշ մանրամասնութիւններ:

Ղարիպ յայտնեց, որ կառավարութիւնը ելեւմտական նոր մօտեցումներ պէտք է ցուցաբերէ՝ այդ մարզի բարելաման ի խնդիր:

Անդրադառնալով պետական պաշտօնեաներու նշանակումներու թղթածրարին՝ Ղարիպ յայտնեց, որ տիրուած համայնքին վերաբերող պաշտօններուն իմաստով իրենք անգիշող պիտի ըլլան իրենց կեցուածքին մէջ:

Միւս կողմէ, Պըրրի հարցազրոյցի մը ընթացքին կոչ ուղղեց կազմելու փտածութեան դեմ պայքարի խորհուրդ մը եւ բացայայտելու խարդախուած նաւթի թղթածրարը:

ՀԸԹԹԻ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԹԻ 1701
ԲԱՆԱՁԵԻՆ ԳՈՐԾԱՐՈՒԹԵԱՆ
ԼԻՔԱՆՆԻ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԿԸ ԶԱՆԱՅ ՅԱՋՈՂՏԵԼ ՖԻՆԻԼԻ-Ի
ԿԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ



Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Նասիֆ Զըթթի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Սիքուլթթա Պոմպարտիերը, որուն հետ քննարկեց լիբանանեան-իտալական երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ հարաւային Լիբանանի մէջ ՖԻՆԻԼԻ-ի միջազգային խաղաղապահ ուժերու պաշտօնավարութեան երկարածուցումին վերաբերող հարցեր:

Զըթթիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Զանատայի դեսպան Էմանուէ Լամուրո: Քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին մաս կազմելու Զանատայի թեկնածութիւնը:

Միւս կողմէ, Զըթթի հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ իրենք կը ջանան հարաւային Լիբանանի մէջ տեղակայուած ՖԻՆԻԼԻ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն կեցութիւնը մէկ տարիով երկարածել՝ աւելցնելով, որ այս իմաստով դիւանագիտական պայքար կը մղուի՝ ՖԻՆԻԼԻ-ի աշխատանքներն ու խաղաղապահ ուժերուն թիւը նոյնը պահելու իմաստով:

Զըթթի հաստատեց, որ Լիբանան յանձնառու կը մնայ Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 բանաձեւի գործադրութեան՝ նկատի ունենալով այդ բանաձեւին բոլոր մանրամասնութիւնները:

Նշենք, որ «ԺուՆուրիա» օրաթերթին համաձայն, հանրապետութեան նախագահ գոր. Միշէլ Աուն վաղը՝ չորեքշաբթի, 3 յունիս 2020-ին, նախագահական պալատին մէջ պիտի ընդունի ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի հինգ մայրուն անդամ երկիրներու դեսպանները, որոնք ներկայութեան պիտի հաստատեն, որ Լիբանան կը փափաքէ ՖԻՆԻԼԻ-ի ուժերուն կեցութիւնը մէկ տարիով երկարածել՝ պահելով այդ ուժերուն նոյն թիւը, ինչպէս նաեւ պիտի ընդգծէ, որ Լիբանան յանձնառու կը մնայ ՄԱԿ-ի թիւ 1701 բանաձեւի գործադրութեան:

Կը նախատեսուի նաեւ, որ նախագահ Աուն բոլորին ուշադրութեան յանձնէ այն իրողութիւնը, որ Իսրայէլ նախանձախնդիր չէ միջազգային այդ բանաձեւին գործադրութեան:

• «Զորոնա» ժաիրին պատճառով ցաւակցութիւնները պիտի ընդունուին հեռաձայնով: Սարգիս Սիմիթեան՝ 03-273685, Սալբի Սիմիթեան՝ +12815586933, Ռոզին Սիմիթեան +13232581408, E-mail (sarkis.simitian@gmail.com):

ՅՈՅՅԵՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ 75 ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԵՋ
ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ԱՌՋԵՒ
ԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ՅՈՒՅԱՐԱՐՆԵՐՈՒ
ԵՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ



Սպիտակ տան առջեւ ամերիկեան ոստիկանության եւ ցուցարարներուն միջեւ բախումներ տեղի ունեցած են, երբ վերջիններս Սպիտակ տան մօտ կրակ վառած են: Ցուցարարները հրկիզած են ամերիկեան դրօշը:

Ըստ «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթին, Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ որոշ ժամանակ գետնի տակ գտնուող թաքստոց փոխադրուած է, երբ ցուցարարները մօտեցած են Սպիտակ տան:

Մեամորթ Ճորճ Ֆլոյտի՝ ոստիկանի մը կողմէ սպանութեան դէմ բողոքի ցոյցերը ներառեցին Միացեալ Նահանգներու տարածքին 75 քաղաքներ, ներառեալ Միսիսիպիոյի, Նիւ Եորքը եւ Լոս Անճելէսը, ուր ձերբակալուեցան շուրջ 400 անձեր:

«Էտոյիէթըտ Փրէս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Միացեալ Նահանգներու տարածքին բողոքի ցոյցերու ընթացքին ձերբակալուած են 4100 անձեր:

Արիզոնա եւ Վըրճինիա Նահանգներուն մէջ արտակարգ դրութիւն յայտարարուեցաւ:

Թրամփ «Թուիթթըր»-ի վրայ գրառում մը կատարելով ամերիկեան լրատուամիջոցները ամբաստանեց որեւէ օտար երկրէ աւելի ապակողմնորոշող լուրեր հրապարակելու յանցանքով:

Ան հրապարակեց Նաեւ այլ գրառում մը, որուն մէջ կը սպառնայ գինուորական ուժ կիրարկել, եթէ Նահանգապետները իրենց աշխատանքին մէջ աւելի խիստ չլլան:

Ան նշեց, որ իր կառավարութիւնը ֆաշականութեան դէմ եղող ԱՆԹԻՖԱ խմբաւորումը ահաբեկչական կազմակերպութիւն կ'որակէ:

Միացեալ Նահանգներու արդարադատութեան Նախարար Ուիլիըմ Պար յայտնեց, որ խաղաղ ու արդար բողոքի ձայները խեղդուած են ծայրայեղական տարրերու կողմէ՝ նշելով, որ ապահովական դաշնակցային մարմիններուն ցուցմունք պիտի տրուի ձերբակալելու գրգռիչները եւ գաւտնք ամբաստանելու դաշնակցային օրէնքը խախտելու յանցանքով:

Միացեալ Նահանգներու Նախագահի պաշտօնին դեմոկրատական թեկնածու, Նախկին փոխնախագահ Ճօ Պայտըն ցուցարարներուն կոչ ուղղեց բռնարարքներ չգործելու:

Ան հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեց, որ ոստիկանութեան վայրայե քարքերներուն դէմ ցոյցերը իրաւացի եւ կարելի են՝ աւելցնելով, որ հրկիզումն ու քանդումը անօգուտ են:

Իրանի արտաքին գործոց Նախարարութեան բանքեր Ապպաս Մուսաւի Ուաշինկթընին կոչ ուղղեց՝ իր ժողովուրդին դէմ «բռնութիւնը դադարեցնելու»:

Ան իր խօսքը ամերիկացի ժողովուրդին ուղղելով ըսաւ. «Աշխարհը լսեց ձեր անիրաւունութեան ձայնը եւ ձեր կողքին կը կանգնի»: Ապա իր խօսքը ամերիկացի պաշտօնատարներուն ու ոստիկանութեան ուղղելով աւելցուց. «Դադարեցուցէ՛ք ձեր ժողովուրդին դէմ բռնութիւնը եւ թոյլ տուէք, որ շուէն առնեն»:

Միւս կողմէ, Մուսաւի յայտարարեց. «Միացեալ Նահանգներու մէջ բռնարարկուած գիտնական Սիրուս Անդարին քանի մը օրէն պիտի վերադառնայ Իսլամական հանրապետութիւն»:

ԹՐԱՄՓ ՈՒՎԵՆԻԿԹԸՆԻ ՄԵՋ
«ԵՕԹՆԵՐՈՒ ԽՄԲԱԿ»-Ի ԺՈՂՈՎՆԻ
ՊԻՏԻ ՀՐԱԽԻՐԷ ՆԱԵՒ ՌՈՒՄԻՆ

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ յայտնած է, որ մտադիր է մինչեւ սեպտեմբեր յետաձգել «Եօթներու խմբակ»-ի վեհաժողովը եւ ատոր հրաւիրել չորս երկիրներ, ներառեալ՝ Ռուսիան: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոյայի» լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով Սպիտակ տան մամլոյ ծառայութեան:

«Նախագահը «Եօթներու խմբակ»-ին մասին հաղորդած է որոշ տեղեկութիւններ, զորս մեզի արտօնած է օգտագործել: Ան վեհաժողովի գումարումը կը յետաձգէ մինչեւ սեպտեմբեր եւ կը ծրագրէ ատոր հրաւիրել Նաեւ Ռուսիան, Չարաւային Զորեան, Աւստրալիան եւ Չնդկաստանը», յայտնած է մամլոյ ծառայութիւնը:

Թրամփ «Եօթներու խմբակ»-ը որակած է երկիրներու շատ հինգած խումբ մը: Սպիտակ տան ռազմավարական հաղորդակցութիւններու հարցով տնօրէն Ալիսա Ֆարա իր կարգին յայտնած է, թէ վեհաժողովը երկիրներու ընդլայնուած խումբին հնարաւորութիւն պիտի տայ քննարկել հարցեր՝ առնչուած Զինաստանին:

Նշենք, որ Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքել շաբաթ օր մերժած էր «Եօթներու խմբակ»-ի ժողովին մասնակցելու համար Ուաշինկթըն ներկայ գտնուելու Թրամփի հրաւերը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԱԾ Է
Ս. ՍՈՖԻԱՅԻ ՄԵՋ ԲՈՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Յունաստանի արտաքին գործոց Նախարարութիւնը դատարարած է Պոլսոյ Ս. Սոֆիա տաճարին մէջ Բորանի ընթերցումն ու **Նամազը**:

«Այդպիսի քայլերը կը վիրաւորեն միջազգային ընտանիքը. Թուրքիան պետք է յարգէ համաշխարհային մշակոյթի ու բնական ժառանգութեան պահպանութեան ուխտը եւ ԵՌԻՆԵԱԶՕ-ն, որուն անդամ կը նկատուի ան», նշուած է յայտարարութեան մէջ:

Յայտարարութեան մէջ նշուած է Նաեւ, որ աղօթքի ընթերցումը կը խախտէ 1935 թուականին թանգարանի վերածած տաճարի կարգապահակը:

Ի պատասխան այս յայտարարութեան, Թուրքիոյ արտաքին գործոց Նախարարութեան բանքեր Չամի Աքսոյ նշած է, որ Յունաստան պետք է ձերբազատուի պատմական բարդոյթներէն եւ պետք չէ ամէն նմանատիպ դէպքերու ժամանակ այդպիսի յայտարարութիւններ տարածել:

Ան մեղադրած է Յունաստանը անհանդուրժողականութեան մէջ, որովհետեւ



տեւ Աթէնք եւրոպական միակ մայրաքաղաքն է, ուր մզկիթ չկայ:

Յիշեցնենք, որ Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան արտօնած էր 29 մայիսին՝ Կոստանդնուպոլսոյ անկման տարելիցին առիթով Պոլսոյ Ս. Սոֆիա տաճարին մէջ **Նամազ** կատարելը: Վերջին տարիներուն բազմիցս քննարկուած է Ս. Սոֆիա տաճարը դարձեալ մզկիթի վերածելու հարցը:

1453 թուականին Կոստանդնուպոլսոյ անկումէն ետք Ս. Սոֆիա տաճարը վերածուած է մզկիթի: Աթաթուրքի կառավարման օրերուն տաճարը վերածուած է թանգարանի եւ իբրեւ այդպիսին կը գործէ մինչեւ օրս:

«ՄԵՆՔ ՓԱՇԻՆԵԱՆՆԵՐ ԵՒ ՉԵԼԵՆԱՔԻՆԵՐ ԶՈՒՆԻՆՔ,
ՊԻԵԼՈՈՒՄԻՈՅ ՄԵՋ ՄԱՅՏԱՆ ՊԻՏԻ ԶԸԼԼԱՅ»

Կ'ԸՍԷ ԼՈՒՔԱՇԵՆՔՕ

Պիեթրոմուսիոյ Նախագահ Ալեքսանտր Լուքաշէնքօ երեկ երկրի պետական անվտանգութեան կոմիտէի Նախագահ Վալէրի Վաքուլչիքի հետ հանդիպումի ժամանակ յայտարարած է, որ Պիեթրոմուսիոյ մէջ մայրաքանիտի պիտի չլլան: Այս մասին կը հաղորդէ պիեթրոմուսական «Պելթա» կայքը:

«Պետական անվտանգութիւնը հիմքերու հիմքն է: Եւ Պետական անվտանգութեան կոմիտէին այդ ոլորտի մէջ Նախագահին հետ միասին յառաջատար դեր վերապահուած է՝ պաշտպանելու մեր պետութեան անկախութիւնն ու գերիշխանութիւնը: Մենք ամբողջովին տոնեակ ենք այն Նապատակներէն, որոնք ունին այստեղի որոշ քամի փչողներ: Այդ Նապատակները մեզի յստակ են. Նախագահական ընտրութեան Նախաշէմին կամ ընտրութեան օրը մեր մօտ մայրաքանիտի սարքել: Անոնք այդպէս ծրագրած են: Կ'ուզեմ այս հանդիպումին ձեզ գգուշացնել եւ բոլոր անոնք, որոնք կը լսեն, բոլոր այդ «մայրաքանդակներու» գգուշացնել, որ Պիեթրոմուսիոյ մէջ մայրաքանիտի պիտի չլլան», յայտարարած է Լուքաշէնքօ:

Պիեթրոմուսիոյ Նախագահը կոչ ուղղած է՝ գուգահեռներ չկատարելու եւ չհամեմատելու Պիեթրոմուսիոյ մէջ տեղի ունեցողը Չայաստանի եւ Ուքրաինոյ մէջ մինչ այդ տեղի ունեցած որոշ իրադարձութիւններու հետ:

«Պետք չէ մեզի համեմատել այնպէս, ինչպէս վերջերս դրացի երկրի թերթը կատարած էր՝ գրելով, թէ իբրեւ թէ մեր մօտ Նոր Ժաշինեաններն ու Նոր զելենսքիներ յայտնուած են, եւ որ մեր մօտ իրավիճակը գրեթէ նոյնն է, ինչ Չայաստանի կամ Ուքրաինոյ մէջ: Իրավիճակը տարբեր ձեւով կրնայ զարգանալ: Միայն թէ մենք փաշինեաններ եւ զելենսքիներ չունինք: Ինչպէս ալ տեղի ունեցած ըլլան Չայաստանի եւ Ուքրաինոյ մէջ իրադարձութիւնները, անոնք երկուքն ալ՝ թէ՛ Փաշինեանը, թէ՛ Չելենսքի, տաղանդաւոր մարդիկ են: Եւ անոնք հետ արդէն մօտիկէն ծանօթացած են: Անոնք անխօս տաղանդաւոր մարդիկ են եւ որ գլխաւորն է՝ իրենց երկիրներու հայրենասերներն են: Անոնք նուիրուած են իրենց երկիրներուն», ըսած է Լուքաշէնքօ:

«Իսկ մերիններէն ոմանք մանրա-



դրամներով կ'ուզեն ծախել այն ամենը, ինչ այստեղ տեղծուած է ո'չ միայն Նախագահ Լուքաշէնքոյի, ո'չ միայն իշխանութեան կողմէ: Ժողովուրդին կողմէ տեղծուած է: Ատոր համար ալ ատիկա կարելի չէ արտօնել: Անգամ մը ես կ'ընդգծեմ, «մայրաքանդակներուն» կ'ըսեմ, որ մենք երբեք պիտի չարտօնենք մեր երկրին մէջ կացութիւնը ապա-կայունացնել», յայտարարած է Նախագահը:

Պիեթրոմուսիոյ ղեկավարը ուշադրութիւն հրաւիրած է Նաեւ այն փաստին վրայ, որ ոչ ոք մարդոց կը խանգարէ արտայայտել իրենց կարծիքը, սակայն պետք է մնալ Նաեւ օրէնքի շրջանակին մէջ:

«Մենք ոչ ոքի բերանը պիտի փակենք: Խնդրեմ, Մինսքի եւ բոլոր քաղաքներուն մէջ յատուկ կետեր կան, ուր կարելի է քննարկումներ կատարել: Եթէ չեմ սխալիր՝ Մինսքի մէջ այդ կետերը վեցն են: Մեր գործը վերահսկողութիւնն է, որպէսզի սահմաններէն դուրս չգան: Վեց կետ կայ Մինսքի մէջ, գնայ, բանավէճեր կատարել: Սակայն արտաքին գործոց Նախարարութեան կոմիտէն ոստիկանութեան հետ համագործակցաբար ոչ մէկ պարագայի պետք է արտօնութիւն տայ, որ օրէնքի խախտումներ ըլլան», ընդգծած է Պիեթրոմուսիոյ Նախագահը:

Լուքաշէնքօ յայտարարած է Նաեւ, որ Պիեթրոմուսիոյ համար քանի մը «համաճարակներ» կան: Ըստ Պիեթրոմուսիոյ Նախագահին, առողջական համաճարակէն բացի կան Նաեւ ընտրութիւններուն ընդառաջ քաղաքական համաճարակ, տնտեսական համաճարակ եւ շարք մը այլ համաճարակներ, որոնք կը պտտին իրենց շուրջ, սակայն տակաւին չեն համարձակիր իրենց քիթը մտցնել Պիեթրոմուսիա:

ՈՒՐԱՆԱՅԻ ԵՐԵՍՓՈՒՈՒՆԸ
ՉԵԼԵՆԱՔԻՆ ԿՈՉ ՈՒՂԱԾ Է՝
ՃԱՆՉՆԱԼՈՒ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ



Ուքրաինոյ Գերագոյն Ռատայի իշխող «Ժողովուրդի ծառայ» կուսակցութեան երեսփոխան Արթըմ Տմիթրուք իր աջակցութիւնը յայտնած է «Սոնս Փոլուս» կազմակերպութեան ղեկավար Սուրէն Պետրոսեանի այն Նախաձեռնութեան, որ կը Նախատեսէ Օսմանեան կայսրութեան մէջ 1915-1922 թուականներուն Չայոց ցեղասպանութեան ճանաչումը. ըստ «Անալիթիքա» կայքին, այս մասին իր դիմատետրեան էջին մէջ գրած է Տմիթրուք:

«Չայոց ցեղասպանութիւնը ճանաչուած է շարք մը պետութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու կողմէ: Ինծի համար անհասկնալի է, թէ ինչո՞ւ մեր երկիրը անտարբեր կանգնած է», կը գրէ երեսփոխանը:

«Իբրեւ Չայաստանի Չանրապետութեան հետ միջխորհրդարանական խումբի ղեկավար՝ ես հաղորդակցութեան մէջ եմ այդ ազգի ներկայացուցիչներուն հետ եւ քաջ կը գիտակցիմ, թէ ինչքան կարեւոր է անոնց համար Ուքրաինոյ կողմէ Չայոց ցեղասպանութեան ճանաչումը: Կարելի չէ անտեսել եւ այլ փակել մեր եղբայրական ժողովուրդներուն նման արիւնտու պատմութեան էջերուն վրայ», կը գրէ Տմիթրուք:

Նշենք, որ Սուրէն Պետրոսեան դիմած էր երկրի Նախագահ Վլատիմիր Չելենսքիին: Այդ ստորագրահաւաքը գետեղուած էր Նախագահի պաշտօնական կայքին վրայ:

ՆՈՐԱՎԵԿԻԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է,
ԹԵ ԵՐԿՐԻՆ ՄԵՋ ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ
ՄԵԿՈՒՍԱՅՈՒՄԻ ԴՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՏԱՏԵԼԸ ԱՆԻՄԱՍՏ ԵՐ



Նորվեկիոյ իշխանութիւնները յայտարարած են, որ իրենց երկրին մէջ մեկուսացում յայտարարել անիմաստ էր: Այս մասին կը հաղորդէ «Լէտիքա»-ն՝ նշելով, որ իշխանութիւնները այդպիսի եզրակացութեան յանգած են՝ ուսումնասիրելէ ետք «Զորոնա» ժաիրով վարակուածներու համաճարակաբանական կապերը:

Ի յայտ եկած է, թէ մարտի կէսերուն, երբ Նորվեկիոյ մէջ մտցուցած են մեկուսացումի սահմանափակումներ, երկրին մէջ վարակման դէպքերու զարգաթնակէտն էր, իսկ հետագային վարակման դէպքերը ինքնաբերաբար նուազած են:

Նորվեկիոյ մէջ եզրակացուցած են, որ եթէ այդ ժամանակ մեկուսացումի սահմանափակումները չհաստատուէին, կացութիւնը աւելի վատ պիտի չլլար, այլ՝ նոյն իրավիճակը պիտի տիրէր:

Ատոր փոխարէն, ըստ մասնագետներու, Նորվեկիան կրնար սահմանները բաց ձգել, սակայն հակահամաճարակային գործողութիւններ կատարել՝ առով իսկ նուազեցնելով ժաիրին տարածումը:

Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան յայտարարեց այն երեք քայլերը, որոնք մեկուսացումի դրութեան շնչումէն ետք քաղաքացիները պարտաւոր են հետեւիլ:

«Եկէք անպայման կրենք դիմակներ, պահպանենք ֆիզիքական հեռաւորութիւն եւ հետեւինք առողջապահական կանոններուն», յայտարարեց Էրտողան:

Նշենք, որ Էրտողան յայտարարած է, որ 1 յունիսէն սկսեալ Թուրքիոյ մէծ մասին մէջ պիտի վերցունք սահմանափակումները, սակայն անոնք պիտի գործեն 65 տարեկանէն մեծ եւ 18 տարեկանէն փոքր քաղաքացիներուն համար:

Թուրքիոյ մէջ մինչեւ օրս արձանագրուած են «Զորոնա» ժաիրով վարակման 160.979 եւ մահուան 4461 պարագաներ:

Նշենք, որ Պրագիւի մէջ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրուեցաւ վարակման մրցանշային՝ 26.417 պարագայ:



«ԲՈՐՈՆԱ»-Ի ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՏԱՊԻ

ԹԷԺ ԳԻԾՆ Է (HOTLINE) 03-188911